

Վ Ա Ճ Ա Ռ Ա Կ Ա Ն

Թիֆլիսի առևտրական գազեր:

Հրատարակում է շաբաթը մէկ անգամ կէս թերթ, կիրակի օրերով: 10 ամսոյ գինը Մարտից մինչև Յունիսը քաղաքում 2 ման. 50 կոպ., դուրսը՝ 3 մանէթ:

ՇԱԲԱԹԱԿԱՆ ԹԵՐԹ
(ԱՌԱՋԻՆ ՏԱՐԻ)

Գաղեթին ստորագրողի կարելի է խմբագրողի մօտ:
Գաղեթումը հրատարակելու կընդունվին մասնաւոր յայտարարութիւններ: Գների մասին կարելի է խմանալ խմբագրատանը:

ՌՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Յիւստատիստը 1867 թ.ին: Տէրութեան կարգադրութիւնները: Նրապաշտօնի վարձատրութիւնները: Տարեր և ուրիշ յայտարարութիւններ: Թիֆլիսի նոր քաղաքական կառավարութեան կանոնադրութեան պատճառով: Մեր վաճառականների գործակատաները (պրիկաշչիկները): Մեր հոգևորականների վրայ մէկ քանի խօսք: Չանազան տեղեկութիւններ Առևտրական տեղեկութիւններ:

ՎԱՃԱՌԱԿԱՆԸ

1867 թ.ին:

Ինչպէս հրատարակել էինք Վաճառականի, 30-դ № ումը 1867 թ.ին Վաճառականը, կտարվի էնպիսի թերթերի վրայ, որ ամիսը հիմնական 4 կէս թերթի տեղ 3-ից մինչև 6-ը լինի իր մեծութեամբ: Գալ տարվան ստորագրողները կստանան ձրիաբար Վաճառական բաւարան, որի մէջ ամփոփված կլինին թէ առևտուրին վերաբերեալ գլխաւոր գործածված բառերը և թէ գլխաւոր փողերի որքանութիւնը Ռաի փողի հետ համեմատելով: 1867 թ.ին Վաճառականի, մէջ կտարվին շարունակ ամեն նուազ մերումը Ռուսաց տեղեկագրի ընկերութեան, ստացած թէ առևտուրին և թէ միւս հասարակական գործերին վերաբերեալ նոր համբաւները: Վաճառականի, գինը գալ տարի թէ քա-

ղաքում և թէ գուրսը կլինի 5 մ. Գալ տարի Վաճառականը, կգուրս գայ հինգ շաբթի օրերով:

Հիմնականից ընդունվում է գալ տարվան ստորագրութիւնը քաղաքում Վաճառականի, խմբագրողի և նրա գլխաւոր գործակից պ. Ա. Երեցեանցի մօտ, նմանապէս և գրավաճառ պ. Ա. Էնֆիաճեանցի գրատանը, իսկ օտար քաղաքացիները պէտք է գառնան ուղղակի Վաճառականի, խմբագրող Գէորգ Տէր-Աղէքսանդրեանցին Թիֆլիսում, իսկ Ռսերէն՝ Редактору Типописскаго Торговаго листа Егору Тер-Александрову въ Типописъ».

Ինդրում ենք 1867 թ.ին մեր գաղեթին ստորագրվել ցանկացողներից, որ նրանք յայտենն իրանց ցանկութիւնը մեզ մինչև էս տարվան նոյեմբերի վերջը, որ կարողանանք ստորագրվողների թիւ համեմատ կարգադրութիւն անել գալ տարվան համար:

ՏԵՐՈՒԹԵՆԻ ԿԱՐԳԱԴՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ:

ՇԱԲԱԹԱԿԱՆ ԳԱՐԶԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ:

Կովկասեան Փոխարքայի գլխաւոր կառավարութեան ֆինանսների ղեկարարամենտի

բաժանման գլխաւոր (начальникъ отдѣленія) նազիրնի սովետնիկ ՇԱՄԽԱՐԵԱՆՅԸ և Կովկասեան Փոխարքայի գլխաւոր կառավարութեանը գտնված, կոլլեկտի սովետնիկ ՄԱՐԿՈՍԵԱՆՅԸ ստացան Պարոյց Լուսնի և Արեւի երկրորդ կարգի նշանը աստղով:

Կովկասեան Փոխարքայի գլխաւոր կառավարութեան ղառաստանական գործերի ղեկարարամենտի աւագ սեղանատեղ, նազիրնի սովետնիկ Խլխան ԲԵՀՐՈՒԳԵԱՆՅԸ ստացաւ երկրորդ կարգի մի և նոյն նշանը:

ՏՈՐԳԵՐ ԵՒ ՈՒՐԻՇ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ:

Թիֆլիսի դաւառական կառավարութեանումը 1867 թ.ին յունվարի 21-ին նշանակված է Գլխան գլխաւոր գտնված Թիֆլիսի քաղաքայի Ալեքսի Շաղինեանցի 4000 մ. գին դրած այգու և գետնի ծախելու տորղը: Մի և նոյն տեղումը 1867 թ.ին յունվարի 18-ին նշանակված է Գորու նահանգի Գիդի-Գորեջվարի դիւղումը գտնված 1100 մ. գին դրած Խլխան Ալեքսանդր և Մարդիօն Մաշարկեյիների երկու այգու և վաճառելու գետնի ծախելու տորղը:

1866 թ.ին նոյեմբերի 1-ին Թիֆլիսի առևտրական ղառարանը Ալեքսեյայի բնակիչ, հրէայ՝ Գալիթ, Յակոբ, Նսանալ և Սահարոն Լալիկուտարաչվիկներին կուտը յայտենց: Կաղուր համար մասնաւոր մարդկանց յայտնվում է, որ նրանք իմաց տան առևտրական ղառարանին՝ 1.) թէ դրանք լւմն ինչ են պարտական և 2.) թէ հււմ մօտ է գտնվում է գլխաւորացածների կայքը: Էս բաները պէտք է յայտենն քաղաքի մէջ գտնվողները էս յայտարարութեան տարվուց յետոյ՝ երկու չաբաթվայ մէջը, Ռուսաց տեղեկանի միւս տեղերումը բնակվողները՝ 4 ամսոյ մէջը, Էս

սահմանիցը դուրսը գտնվողները՝ 1 տարվայ մէջը:

Թիֆլիսի նոր քաղաքական կառավարութեան կանոնադրութեան գործ դնելու համար սարգկած կոմիտեան յայտնում է Թիֆլիսի բնակիչներին, որ նրանցից իր ու լինելու և կայքի մասին սրանից առաջ սարգկած չորս կոմիտեաներին չէ ներկայացրել ցուցակը, ներկայացնեն հիմի նոյեմբերի 8-ից սկսված մինչև 22-ը: Էդ նոր կոմիտեան Թիֆլիսի գաւառապետի նախագահութենով բաղկանում է Թիֆլիսի գաւառական կառավարութենի մէկ քանի անդամներէ, հին քաղաքական կառավարութենի անդամից և քաղաքի չորս կարգի բնակիչներէ ներկայացնողներէ: Վերոյիշեալ ցուցակները պէտք է ներկայացնուին Թիֆլիսի քաղաքական կառավարութենի անդամ, կոլլեկտիւ սովետնիկ Ալէքսանդր Օսիփովիչ Դրեմկիցա-Կովալսկին:

Թ Ի Ֆ Լ Ի Ս

նոյեմբերի 19—1866.

Ներկայ ամսի վերջերին պէտք է լինի Բարձրագոյն շնորհած քաղաքական կառավարութենի նոր կանոնների հիման վրայ նոր քաղաքագլխի և միւս պաշտօնականների ընտրութիւնը: Կարծիք չկայ, որ էդ մեզ շնորհած կանոնները և հետևաբար դրանցից ծագած իրաւունքները նոր ապացոյց են կառավարութենի մեզ վրայ ունեցած հոգատարութենի: Խուսաստանի մէջ դրանովմա քաղաքներից մէկ քանի տարի առաջ Պետերբուրգը և Մոսկովը առաջինն էին էդ իրաւունքների ստացողը, նրանցից յետոյ՝ Ռիգան, Օդեսան և մէկ քանի ուրիշ Ռուսաստանի առաջնակարգ ծաղկած քաղաքները և վերջապէս այժմ Թիֆլիսը: Նոր կանոնադրութենի առաջին և զլխաւոր բարի պրտուղը էն է անշուշտ, որ որոշեց պարզապէս քաղաքացի բառի նշանակութիւնը: Քաղաքացի բառը, որ կնշանակի քաղաքի բնակիչ, քաղաքի բարեկարգութենի համար հոգացող և քաղաքացու իրաւունքներ ունեցող, մինչև էսօր շատ անտեղի կերպով էր հասկացվում և ընդունվում: Մինչև

էսօր քաղաքացի սովոր էին համարել միմիայն վաճառականներին, թէ և էդ վաճառականներից շատերը ամենևին անշարժ կայքի տէր էլած և ուրեմն հարկաւորութիւն էլ չեն ունեցած քաղաքի համար զլուխ ցաւեցներու: Ազնւականը, որ թէ և կէս քաղաքի շնորութիւնների տէր լինէր, պէտք է հեռուից մտիկ տար քաղաքի գործերին, քաղաքագլխի ընտրութենին և փոխվելուն և ինքը ոչ իրաւունք ունէր և ոչ ձէն իր և մի և նոյն ժամանակի քաղաքի օգուանները պաշտպանելու միմիայն էն պատճառով, որ ազնւական պատւանուն ունէր և դուքան բազարի տէր չէր:

Քաղաքիս բոլոր բնակիչներին հաւատարմար քաղաքականութենի իրաւունք տալը—ահա էն մեծ իրաւունքը, որ էսօր շնորհված է մեզ Օգոստոսի առ փոխարքայի միջնորդութենով: Մնում է մեզ, ինչպէս սրանից առաջ էլ առիթ ունեցանք ցանկանալու, մաղթել բոլոր քաղաքացոյ առողջ միտք, ճշմարտութիւն, անկողմնապահութիւն և հեռատեսութիւն, որ էս նոր կանոններով էլած ընտրութիւնը երբէք չմանի մինչև էսօր էլածներին և մեր քաղաքը ունենայ լուսաւորեալ, ճշմարտասէր և հասարակութենի իրաւունքների պաշտպանող քաղաքագլուխ իր օգնականներով: Ես բանը մանաւանդ ցանկալու է այժմ մեր քաղաքին, երբ մեզ համար պատրաստվում է նոր ապագայ, երբ Սև ծովի հետ կապվելով, Թիֆլիսը պէտք է դառնի Ներսիսի հարուստ քաղաքների կարգումը: Աստուած տայ, որ մենք կատարելապէս գործով հաստատենք Բարձրագոյն կառավարութենի դէպի մեզ ունեցած հաւատը:

Ա. Ե.

ՄԵՐ ՎԱՃԱՌԱԿԱՆՆԵՐԻ ԴՈՐԾԱԿԱՏԱՐՆԵՐԸ (ՊՐԻԿԱՇՁԻԿՆԵՐԸ):

Վաճառականը իր գործը լաւ վարելու համար պէտք է ունենայ իր մագաղնումը հաշւապահներ (բուխալտերներ և կոնտորչիկներ) և գործակատարներ (պրիկաշչիկներ): Ամեն գործը

մէկ մարդ կամ շատ վատ կարող է կատարել, կամ բոլորովին անյաջող: Եւ դուր համար էլ ուրիշ առուտուրով ծաղկած երկիրներումը վաճառականի գործը բաժանված է իր բազմաթիւ հաշւապահների և գործակատարների մէջ: Եւ դուրից է, որ մագաղնի տէրը իր մանր-մունր բաներով չպարսպելով, կարողանում է իր գործի ընդհանուր ուղղութենի վրայ մտածել և նոր ու ընդարձակ ճանապարհ բաց անել իր գործունէութենի համար: Են էլ պէտք է զիտենալ, որ Ներսիսի վաճառականը էդքան հաշւապահներ և գործակատարներ պահելով, բոլորովին սպառնալից դառնում է իր իրաւունքները: Նրանց մէջը բոլորովին զարմանալի և անսովոր բան չէ գործակատարներին տարին 1000 ու 10000 մանեթների տալը: Յիմար չէ Ներսիսի վաճառականը էդքան դումարներ բաժանելով իր հաշւապահներին և գործակատարներին: Նա լաւ հասկանում է, որ երբ իր մագաղնի ծառայողը բոլորովին ապահովացրած է, ծառայողը ոչ մէկ ժամանակ ծուռն աչքով չի մտիկ տալ մագաղնի տիրոջ ունեցածին. եթէ պատահին էլ էդպիսի ծռնութիւններ—էդ միայն բացառութիւններ են:

Վաճառականի մօտ գործակատար և հաշւապահ լինիլը բոլորովին ամօթ և նախաստինք չէ մարդու համար Ներսիսումը, որովհետեւ ամենքն էլ մեծ գումարների տէր չեն կարող լինիլ, այլ մեծ մասը փող չունի և էդ փող չունեցողները պարտաւորվում են ուժ իկով ծառայելու վաճառականին և դուրսին: Մենք իդուր չգործածեցինք էս բառը, այլ էդուրով կամենում էինք ցոյց տալ, որ էնտեղի գործակատարները զորդ իրանց մագաղնի տիրոջ գործին են ծառայում և ոչ թէ իսկ տիրոջը: Մագաղնի տէրը երբեմն չէ էլ ճանաչում իր բոլոր գործակատարներին և հարկաւոր էլ չէ նրանց ճանաչելը, որովհետեւ նրանց կատարած գործը տեսնում է միշտ իր կարգին:

է թէ քաղաքական և թէ զինուորա-
կան ծառայութիւններումը մեծ մեծ
պաշտօններ վարելու, հնքան շնորհ և
կարողութիւն չի ունենալ և եկեղեցա-
կան պաշտօնների կատարելու: Գիտուն
և բան հասկացող մարդը ամեն պաշ-
տօնին էլ կարող է իրան յարմարաց-
նել և մեծ օգուտ բերել հասարակու-
թեանին իր գործունէութենով: Բայց
ինչի՞նչ բանագէտ և ուսումնական երի-
տասարդներից համարեալ թէ ոչ մէկը
չէ համաձայնում եկեղեցական պաշտօ-
նեայ լինելու: Պաշտօնը ցած է—բոլո-
րովին չէ, միջոց չունի՞ իր գիտութիւնը,
ուսումը ժողովրդի մէջ ծաւալելու—
ընդհակառակը. ապա ի՞նչ է, որ հզպէս
յետ է քաշում զբանց հզ պաշտօնից:
Էն կարծիքը, էն համբաւը, որ ստա-
ցել են մեր եկեղեցականները և նրանց
ապրուստի համար նշանակված միջոցը,
որ նրանց աչքումը շատ ստորին և ան-
վայել է երևում: Կուզե՞ս լաւ հոգեւո-
րականներ ունենալ—բոլորովին վերջ
տուր ազատ հովիւներին և նրանց զը-
ծուծ ապրուստին: Ո՞ր բանագէտ, գործ-
ունեայ մարդը կկամենայ իր ընկեր ու-
նենալու անգէտ և ծոյլ մարդուն, որն
որ բայ ի էն, որ չէ օգնում նրան, արգե-
լում էլ է նրա գործունէութեանին: Մանր
է ուսումնական մարդու համար մա-
նաւանդ անուսում և ազատ զլխաւորի
ձեռի տակ լինելը և պարզ բան է, որ
անուսում գլխաւորի ձեռի տակն էլած
ուսումնականն էլ կըթանայ և ախմայ
կնմանի իր կոպիտ զլխաւորին:

Ո՞ր ուսումնական տղայ, Աստուած
սիրէ՞ք, կհամաձայնի եկեղեցական դառ-
նալու, գիտենալով, որ ուրիշ գործե-
րով սրտապելով կարող է մէկ քանի
տարւումը տարեկան հազար մանեթներ
ստանալու. իսկ քահանայ դառնալով,
պէտք է իր օրական ապրուստը ժողովէ
եկեղեցումը ժանկոտ թեփշին ձեռին:
Էս տեսակ փող ժողովելը աղքատութե-
նի մէկ տեսակն է, որ բոլորովին անվայել
է քահանայի բարձր աստիճանին և հզ-
պիսով ցածմանում է նրա պաշտօնը ժո-

ղովրդի աչքումը: Թէպէտ ի հարկէ հո-
գեւորականներին ապրուստ է հարկաւոր
և բաւական ապրուստ, որովհետեւ զը-
րանք ընտանիքների տէր են, բայց մի՞թէ
հիմիկվան զբանց փող ժողովելու ձեւի-
ցը մէկ աւելի յարմարը և ազնիւը չէր
կարելի հնարել: Հարկաւոր է ուշք
դարձնել էս բանին, որ միջոց տվի
մեր ուսումնական տղերանց եկեղեցական
դառնալու և ժողովրդին աւելի օգուտ
բերելու, քան թէ որքան հիմի են բե-
րում: Բոլորովին միջոց չունենալով
կանգնել ժողովրդի դէմ հանդիման և
խօսիլ նրա հետ նրա պակասութիւն-
ների վրայ և ցոյց տալ աւելի լաւ և
աւելի բարօրութենով ապրելու միջոց-
ները:

Ղևանդ երէց Խարաղեանց:

ՁԱՆԱԶԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ:

Իշխան Մ. Ս. Վարոնցովի
արձանը Թիֆլիսումը: 1857 թւին
Կովկասեան Փոխարքայ Իշխան Բարեա-
տիմակու միջնորդութենով Բարձրագոյն հրա-
մանով թոյլ տվեցաւ Կովկասեան Փոխար-
քայ էլած, գնեցաւ—ֆելդմարշալ Իշխան Մի-
խայիլ Սիմօնիչ Վարոնցովի յիշատակի հա-
մար Թիֆլիսումը Կուր գետի վրայ շինված
Միխայիլովսկի կոչված կարմունջի վրայ մէկ
արձան կանգնեցնել: Էդ արձանի համար
փողերի ժողովելու՝ Կովկասեան կողմի բոլոր
ընտանիքների ցանկութենով ստորագրութիւն
բացվեցաւ և էդ ստորագրութենումը մաս-
նակից դառնեցան ամեն կարգի մարդիկը:

1860 թւի փետրվարին Պետերբուրգումը
երեւելի ուսաց ճարտարապետ, քանդակա-
գործութեան պրոֆեսոր Պիմենովին յանձնու-
ցաւ աճադին բրնձէ արձան շինել, որ ներկա-
յայտում լինի Իշխան Միխայիլ Սիմօնիչին
ոտի վրայ կանգնած: Էդ արձանի շինելը
ուշայաւ առաջ Պիմենովի շատ ուրիշ գործեր
ունենալու և յետոյ նրա հիւանդութեանի և
մահի պատճառով, Պիմենովի մահից յետոյ,
նրա շինած մոդելի համեմատ, սկսած ար-
ձանի շինելը վերջացրուց նրա օգնական,
ճարտարապետ Կրեյտանը: Արձանը ձուլվե-
ցաւ 1865 թւին պ. Կողաւնի ձուլարանումը,
ինչտեղ որ ձուլված է նմանապէս և հռչակ-
ված Նովկորոդի Ռուսաստանի հազարամէի
արձանը: Բրնձից ձուլված Իշխան Վա-

րոնցովի արձանը ներկայացվեցաւ Թաղաւոր
Կայսերը և Մեծ Իշխան Կովկասեան Փո-
խարքային, որոնք սնդղեցին և իրանց հա-
ւանութիւնը յայտնեցին: Արձանը չողկնա-
ւով ուղարկվեցաւ Պետերբուրգից Լոնդոնով
Փոթի և հղտեղից ցամաքով ևկաւ արդէն
Թիֆլիս:

Էդ արձանի բարձրութիւնը 5 արշին է,
իսկ քաշը 160 փութ:

Արձանի կանգնեցնելու հանդէսը, Նորին
Կայսերական Փոխարքայի կամքով, կատար-
վելու է 1867 թւի մարտի 25-ին, հենց էն
օրը, երբ Նորին Պայծառափայլութիւն Մի-
խայիլ Սիմօնիչը 1845 թւին մտել է Թիֆ-
լիս:

ԱՌՆԵՏՐԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ:

Լիւերպուլ, հոկտեմբերի 29:

Էսօր ծախվեցաւ 10,000 հակ բամ-
բակ. առուտուրը թոյլ է, զները պա-
կասեցան. Ամերիկայի միջին տեսակը
14³/₈ պէնս:

Պետերբուրգ, հոկտեմբերի 31:

Ռուսաց տէրութիւնը Լոնդոնի բան-
կիւրներէրց պարտք առաւ 6 միլիօն ֆունտ
ստերլինգ, իր արտաքին պարտքերի շահը
տալու համար: Բանկը զանազան տեսակ
շահ բերող թղթադրամներ զբաւ վեր
առնելու համար բարձրացրեց իր շահը
մինչև 10%, որ և բիրժայի վրայ վատ
ազդեցութիւն ունեցաւ:

Կուրսը Լոնդոնի վրայ 31¹/₈ պէնս:
Պարիժի վրայ . 327³/₄ սանտիմ:
50% Լատարեյով առաջին փոխա-
ռութեան տոմսակները 110¹/₂ մանեթ:
— Նրկորդիւնը . . . 107 մանեթ:
Ռսկին 6 մ. 20 կ.

Թիֆլիս, նոյեմբերի 19:

Շաքարը Ֆրանսիացոյ 10 մ. 10 կ.
— Ռսինը . . . 10 մ. 40 կ.
Արծաթը 84⁰/₁₀ . . . 220 մ.
— 72⁰/₁₀ . . . 60 մ.
Ռսկին 6 մ. 60 կ.